Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

№ 37

ԲՅՈՒԼԼԵՏԵՆ № 1

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

1931 ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 6826 (բ). Պատվեր 4830։ Տիրաժ 2000

20 MAR 2018

352

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՓՈՔՐ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

1931 թ. օգոստոսի 17-ին.

Գյուղական խորհուրդների աշխատանքների վերակառուցման ստուգատեսի միամսյակ կատարելու մասին Կենտգործկոմի Փոքր Նախագահությունը ՎՈՐՈՇԵՑ.—

1. Օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը կատարել գյուղական խորհուրդների վերակառուցման ստուգատեսի միամսյակ, նպատակ ունենալով գյուղխորհուրդների աշխատանքներում առաջացնել իրական շրջադարձ դեպի քաղաքական, տնտեսական-ֆինանսական խնդիրները (կոլտնտշարժում, ներքին միջոցների մոբիլիզացիա, մշակման և բերքահավաքման, մթերումների և այլ կամպանիաներ)։

2. Առաջարկել ՀՍԽՀ Կենտգործկոմի Կազմբաժնին մշակել ստուգատեսի միամսյակի վերաբերյալ թեզիսներ և ուղարկել տեղերին։

3. Ստուգատեսի միամսյակը կատարելու համար մոբիլիզացիայի յենթարկել Կենտգործկոմի նախագահության անդամներին և Կազմբաժնի հրահանգիչներին, կցելով նրանց շրջաններին և պատասխանատու դարձնել ստուգատեսի աշխատանքի համար։

4. Անհրաժեշտ համարել լավ աշխատող գյուղխորհուրդներին պարգևատրման յենթարկելու հարցը։

Կազմակերպել Հանրապետական Համաժողով նախագահությամբ ընկ. [illegible] Դ[illegible]չոյանի և անդամակցությամբ Ստամբոլցյանի, Բ. Հ[illegible]ունյանի (Հողժողկոմատից), Մինասյանի (Կոլտնտ[illegible]ից) Կենտկոմի Ագիտ. Բաժնից՝ Վ. Մախասյանի (Մ[illegible]) և Քեթեկյանի՝ Ֆինժողկոմատից։

Առաջարկել Համաժողովին պարգևատրման համար ստեղծել միջոցներ. [illegible] նախագիծ պարգևատրման կարգի մասին

և ներկայացնել նախագահության առաջիկա նիստին ի հաստատություն:

5. Լավ աշխատող գյուղխորհուրդներին պարգևատրելու համար առաջարկել շրջգործկոմներին ընտրել շրջ. հանձնաժողովներ՝ նախագահությամբ շրջգործկոմի նախագահի և շրջկոմի, շրջկոլխոզմիության, ԼԿՅԵՄ շրջկոմի ներկայացուցչի և շրջգործկոմի հրահանգչի անդամակցությամբ:

6. Առաջարկել շրջգործկոմներին խորհուրդների միամսյա ստուգատեսի համար բացատրական լայն կամպանիա մղել և նրա շուրջը խորհրդային լայն հասարակայնություն կազմակերպել:

7. Առաջարկել շրջգործկոմներին անմիջապես սկսել ստուգատեսի գյուղական հանձնաժողովներ կազմակերպելու աշխատանքները. գյուղհանձնաժողովների կազմը սահմանել 5 հոգի, շրջգործկոմի ներկայացուցիչը, 2 անդամ գյուղխորհրդից և մեկական ներկայացուցիչներ կոլտնտեսությունից և կոմբջիջից:

8. Ստուգատեսի աշխատանքները հաջողությամբ վարելու և ժամանակին ավարտելու ամբողջ պատասխանատվությունը դնել շրջգործկոմների նախագահների վրա:

Կենտգործկոմի Նախագահի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Ռ. ԴԱՇՏՈՑԱՆ

Կենտգործկոմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝
Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Հ. Շ ա պ

Շրջաբերական

Բոլոր շրջգործկոներին և Լենինականի Քաղխորհրդին.

Անդրկենտգործկոմի Նախագահության և Հայկենտգործկոմի փոքր նախագահության ոգոստոսի 17-ի վորոշմամբ ոգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 20-ը հայտարարվում է գյուղխորհուրդների աշխատանքների ստուգատեսի միամսյակ, նպատակ ունենալով այդ ժամանակամիջոցում յերևան հանել յուրաքանչյուր գյուղխորհրդի աշխատանքներում նկատված թերություններն ու հիվանդագին յերևույթները և գործնականորեն ոժանդակել նրանց՝ վերակառուցելու իրենց աշխատանքները— ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման

ՀԱՅԿՈՄՍԿՈՒՍԻՆ
ՀԱՄԱՐ
11-313169

ներկա շրջանի պահանջների համաձայն, յերեսները դարձնելով գյուղխորհուրդների դեպի քաղաքական, տնտեսական-ֆինանսական խնդիրները (կոլտնտեսաշարժում, մթերումներ, ներքին միջոցների մոբիլիզացիա, բերքահավաք և այլն) և կատարել տալով այդ ուղղությամբ իրական և վճռական շրջադարձ:

Գյուղական խորհուրդների աշխատանքների ստուգատեսի կամպանիան հաջող կազմակերպելու և ավարտելու համար Հայկենտգործկոմն առաջարկում է անմիջապես ձեռնամուխ լինել գործնական աշխատանքներին, կիրառելով հետևյալը.—

1. Կազմակերպել շրջգործկոմին—քաղխորհրդին կից ստուգատեսի միամսյակը կիրառող շրջանային հանձնաժողով՝ շրջգործկոմի նախագահի նախագահությամբ, և կուսշրջկոմի, կոլտնտմիության, ԼԿՅԵՄ շրջկոմի, արհմիության ներկայացուցիչների և շրջգործկոմի հրահանգչի անդամակցությամբ:

Այս հանձնաժողովի վրա դնել նաև լավ աշխատող գյուղխորհուրդներին պարգևատրելու աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարությունը:

2. Բոլոր գյուղխորհուրդներին առընթեր կազմակերպել ստուգատեսի գյուղական հանձնաժողովներ շրջգործկոմի ներկայացուցչի նախագահությամբ և գյուղխորհրդի նախագահի, կուս. ու ԼԿՅԵՄ բջիջների, չքավորական խմբակների ու կոլտնտեսության ներկայացուցիչների անդամակցությամբ:

3. Հրավիրել ստուգատեսի գյուղական հանձնաժողովների նախագահների, շրջանային ակտիվի և գյուղխորհուրդների նախագահների խորհրդակցություններ, տալով հրահանգչական ցուցումներ կամպանիան կիրառելու կարգի և նպատակի մասին:

4. Ստուգատեսի շրջանային հանձնաժողովի նիստերում պարբերաբար լսել գյուղական հանձնաժողովների զեկուցումները և կատարել պարբերական ստուգումներ, ապահովելով ղեկավարությունը նրանց նկատմամբ:

5. Ստուգատեսի կամպանիայի աշխատանքներին ակտիվ մասնակցության հրավիրել պրոֆմիություններին, հասարակական և այլ կազմակերպություններին և մոբիլիզացիայի յենթարկել նրանց ակտիվին և ուղարկել գյուղերը գյուղական հանձնաժողովներին ոժանդակելու:

6. Նշանակել հատուկ թղթակիցներ, նրանց վրա պարտականություն դնելով կենտրոնական և տեղական մամուլում լուսաբանելու ստուգատեսի աշխատանքների ընթացքը: Գյուղերում

լույս ընծայել պատի լրագրերի հատուկ համարներ, նվիրված ստուգատեսի աշխատանքներին, յերևան հանելով գյուղխորհուրդների և ստուգատեսի աշխատանքների թերությունները:

7. Կազմել գյուղխորհուրդներն ամրապնդելու ուղղությամբ կոնկրետ ծրագիր և գյուղխորհուրդներում մշտական աշխատանքի ուղարկել շրջանային ակտիվից:

8. Ստուգատեսի կամպանիայի նյութերը մշակելուց հետո, հրավիրել գյուղակտիվի կուս—կոնֆերենցիաներ, գյուղխորհուրդները հետագայում ամրապնդելու, նրանց գյուղի քաղաքական, տնտեսական-ֆինանսական աշխատանքների իրական ղեկավարներ դարձնելու համար կիրառվելիք կոնկրետ միջոցառումների շուրջը:

Ստուգատեսի հանձնաժողովների հիմնական անելիքներն են՝

ա) Գյուղական ստուգատեսի հանձնաժողովը կազմում է բացատրական կամպանիայի ծրագիրը, ստուգատեսի բրիգադների կազմակերպման կարգը, բրիգադների քանակը և ղեկավարում է ստուգատեսի աշխատանքները մինչև ավարտվելը: Հանձնաժողովն ամփոփում է բրիգադների աշխատանքները, գյուղխորհրդի աշխատանքների դրության մասին զեկուցում է տալիս գյուղխորհրդի ընդլայնած պլենար նիստում: Նա վոչ միայն յերևան է բերում թերությունները, այլև տալիս է կոնկրետ ցուցումներ, թե ինչպես պետք է վերացնել թերությունները, կապ է պահպանում շրջանի հետ և պարբերաբար տեղեկացնում աշխատանքների ընթացքի մասին, անհրաժեշտության դեպքում ստանալով հարկ յեղած ցուցումները:

Ստուգատեսի հանձնաժողովի պարտականության մեջ է մտնում նաև գյուղխորհուրդների անդամների և ստուգիչ բրիգադների միջև սոցմրցում կազմակերպելն ու ղեկավարելը

բ) ստուգատեսի հարցերի մասին բացատրական կամպանիա յե կիրառում՝ կոլտնտեսականների, գյուղ-հասարակական կազմակերպությունների անդամների ու չքավորական խմբակների ժողովներ կազմակերպելու և պատի լրագրերում ստուգատեսի աշխատանքների նպատակն ու դերը մասսայականացնելու միջոցով.

գ) ստուգատեսի հանձնաժողովը կազմակերպում է ստուգատեսի բրիգադներ գյուղակտիվից (հարվածայիններից, կոլտնտեսականներից, գյուղխորհրդի սեկցիաների անդամներից, կոմյերիտ անդամներից, կանանցից, բատրակներից, չքավորներից և միջակներից).

դ) բրիգադները կազմակերպվում են կոմսոմոլ ցուցակագրության և կազմակերպված ձեվով զանազան հասարակական կազմակերպություններից, բրիգադների անդամներ ջոկելու և գլխավորապես ստուգատեսին նվիրված ժողովներում բրիգադներ ընտրելու միջոցով.

ե) յուրաքանչյուր բրիգադի պետք է տրվի վորոշակի հանձնարարություններ, մասնանշելով աշխատանքի առարկան, որինակ՝ գյուղխորհրդի առանձին սեկցիաների ստուգման բրիգադ, կոլտնտեսության բրիգադ այնտեղ, վորտեղ վորևե տեսակետից աշխատանքները լավ դրության մեջ չեն (անհարազատ տարրեր, վատ կազմակերպում, և այլն), կամ հատուկ հարցերի համար, ինչպես որինակ՝ կոլտնտեսության մեջ գործավարձի հարցն ուսումնասիրող, անգրագիտության վերացման, բամբակի մշակման և բերքահավաքի, աշնանացանի նախապատրաստման և այլ աշխատանքները ստուգող բրիգադներ.

զ) բրիգադները ստուգման ընթացքում նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ իրենց առաջարկությունները փոխադրում են գյուղխորհուրդների համապատասխան սեկցիան ի քննություն և վերջիններն այդ առաջարկների հիման վրա ձեռք են առնում ահրաժեշտ միջոցներ, որինակ՝ բրիգադը հայտնաբերել է բամբակի քաղհանի մշակման վիժեցման փաստը, նա անմիջապես զեկուցում է գյուղարտադրական խորհրդակցությանը, վորը բրիգադներ է կազմում գյուղխորհրդի և սեկցիաների անդամներից, կազմակերպում է հասարակական բուքսիր և այլն, կամ բրիկադը հայտնաբերում է կոլտնտեսության մեջ գործավարձի բացակայություն, վորի մասին անմիջապես զեկուցում է սեկցիային և անում է իր առաջադրությունները, իսկ վերջինը կատարում է գյուղխորհրդի հին-փորձված կոլտնտեսական անդամների ամրացում՝ կոլտնտեսության մեջ գործավարձ կիրառելու, հաշվառում կազմակերպելու համար և այլն.

ը) բրիգադներն իրենց աշխատանքների ընթացքում վոչ միայն կապ են պահպանում ստուգատեսի հանձնաժողովի հետ, այլև գյուղխորհրդի համապատասխան սեկցիաների հետ, վորոնք պարտավոր են ցույց տալ բրիգադներին իրական օգնության ստուգատեսը կատարելու գործում.

թ) ստուգիչ բրիգադները զանազան ժողովներում հանդես են գալիս գյուղխորհրդի սեկցիաների աշխատանքների վերաբերյալ զեկուցումով. այսպես, գյուղարտադրական խորհրդակցության

աշխատանքներն ստուգող բրիգադը զեկուցում է կոլտնտեսական-ների ժողովում, կոոպերատիվ-մթերման աշխատանքները ստուգող բրիգադը՝ գյուղի ընդհանուր ժողովում և այլն.

ժ) ստուգատեսի հանձնաժողովները կազմակերպում են գյուղխորհրդի մի շարք առանձին անդամների հաշվետու զեկուցումներ (նակազը կատարելու մասին և այլն): Ժողովը նման զեկուցումների համար տալիս է կոնկրետ ցուցումներ հետագա աշխատանքների մասին, կամ պահանջ է դնում հետ կանչելու իր ընտրած պատգամավորին.

ի) ստուգատես հանձնաժողովները ստուգատեսի արդյունքների և գյուղխորհրդի աշխատանքների վերակառուցման, միջոցառումների մասին զեկուցում են գյուղխորհուրդների ընդլայնած պլենար նիստերում գյուղխորհուրդների սեկցիաների, հասարակական կազմակերպությունների, ստուգիչ բրիգադների անդամների, կոլտնտեսականների, չքավորների, բատրակների և միջակների մասնակցությամբ.

լ) ստուգատեսի հանձնաժողովները պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, վորպեսզի մասսան լիակատար հնարավորություն ունենա ոգտագործելու անդործունյա գյուղխորհրդի անդամներին հետ կանչելու իր իրավունքները.

խ) ստուգատեսի աշխատանքների ընթացքում կարող են լինել այնպիսի դեպքեր, յերբ անհրաժեշտ է լինում հարց դնել այս կամ այն գյուղխորհուրդը ցրելու մասին. նման հարցերը պետք է վճռվեն շրջգործկոմների զեկավարությամբ. վերջինները հետևելու յեն, վորպեսզի ցրելու պահանջը բղխի մասսաներից: Գյուղխորհուրդը ցրելու պահանջը պետք է բազմակողմանիորեն քննության առնվի ընտրողների մասսայական ժողովներում, թույլ չտալով այդ հարցում վարչական չեղում.

ծ) ստուգատեսի հանձնաժողովները, բրիգադները և գյուղխորհրդի յուրաքանչյուր անդամ, կոլտնտեսական, հարվածային և գյուղի ամեն մի ակտիվիստ պետք է նախաձեռնողն ու կազմակերպողը հանդիսանա դեպի կոլտնտեսություններն առաջանալիք նոր հոսանքի՝ կոլտնտշինարարության հարցերի շուրջը մասսայական ագիտացիոն աշխատանքները ծավալելու միջոցով (հին կոլտնտեսականների զրույց անհատական տնտեսատերերի հետ, կոլտնտեսության աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպում, կոլտնտեսական յերեկոներ և այլն) կամավոր հիմունքներով

կոլտնտեսությունները ներգրավելու չքավոր և միջակ գյուղացիներին:

Հին կոլտնտեսությունների կազմակերպչորեն ամրապնդմանը՝ կոլտնտեսությունների ներքին արտադրությունն ամրացնելու միջոցով (գործավարձ, աշխատանքի հաշվառում և այլն), հատուկ հանձնարարություններով գյուղխորհրդի անդամներին կոլտնտեսություններին ամրացնելու, գյուղխորհրդի անդամներից ցուցադրական արտադրական բրիգադներ կազմակերպելու և այլ միջոցներով:

Ի Հայկենտգործկոմի նախագահի՝
Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Ի Հայկենտգործկոմի Քարտուղարի՝
Պ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՄԻԱՄՍՅԱ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ստուգատեսի աշխատանքները զեկավարելու և լավ աշխատող խորհուրդներին պարգևատրելու նպատակով կազմակերպված է Հանրապետական Հանձնաժողով, մասնակցությամբ կուս. և ԼԿՅԵՄ Կենտկոմների, չահագրգռված ժողկոմատների և կոոպերատիվ կազմակերպությունների ներկայացուցիչների: Առաջարկված է յեղել տեղերին շրջանային և գյուղական մասշտաբով ևս կազմակերպել ստուգատեսի և պարգևատրման հանձնաժողովներ և անմիջապես անցնել մասսայական բացատրական ու գործնական աշխատանքներին:

Վորպեսզի Կենտգործկոմի ոպերատիվ և բանավոր կապն ու զեկավարությունը տեղերի հետ լավ լինի, Կենտգործկոմի Նախագահությունը մոբիլիզացիայի յենթարկեց 9 ընկերների և նրանց կցեց շրջաններին ստուգատեսի աշխատանքները զեկավարելու և տեղերին ոժանդակելու համար. բացի այդ ընկերներից Կենտրոնական Կոմիտեյի կողմից շրջաններին կցված 25 պատասխանատու ընկերներին (վորոնք կցված են ներկա քաղաքական կամպանիաները զեկավարելու համար), միաժամանակ, հրահանգված է յեղել, վորպեսզի ստուգատեսի կամպանիան ևս զեկավարեն ու ոժանդակեն տեղերին՝ այն հաջողությամբ և ժամանակին ավարտելու համար: Այս ուղղությամբ ևս Անդրկենտգործկոմի կոոպ-

մից մոբիլիզացիայի չեն յենթարկված Անդրկենտգործկոմի անդամներ և ամրացված շրջաններին, վորոնք մինչև որս դեռ չեն մեկնել տեղերը:

Ստուգատեսի կամպանիան կիրառելու համար Կենտգործկոմի Կազմբաժնի կողմից մշակվել են համապատասխան թեզեր և ուղարկվել տեղերին ի ղեկավարություն: Չնայած նրան, վոր Կազմբաժինը տեղերին հեռագրել է տաս որը մեկ անգամ ինֆորմացիա ներկայացնել կամպանիայի ընթացքի մասին, սակայն մինչև որս վոչ մի շրջան չի ներկայացրել այդ ինֆորմացիաները: Մեր ձեռքի տակ յեղած այն 16 շրջանների վերաբերյալ տվյալներից, վորտեղ յեղել են մեր կողմից կցված ընկերները պարզվում է, վոր շրջգործկոմները դեռևս մասսայական բացատրական աշխատանք այդ ուղղությամբ գյուղերում չեն կատարել, ստուգատեսի կամպանիան հասել է մինչև գյուղխորհուրդ, իսկ կոլտնտեսականների, չքավոր և միջակ գյուղացիների սեփականությունը չի դարձել կամպանիայի նշանակությունը, և ղեկուցումներ չեն տրվել այդ ուղղությամբ. հատկապես բացատրական աշխատանքները թույլ են ընթանում յենթակա գյուղերում. շրջանից կցված ընկերները բավականացել են միայն կենտրոնական գյուղերում ստուգումը կատարելով, իսկ այդ աշխատանքներն արմատապես չեն շաղկապել յենթակա գյուղերի հետ: Շրջանային, պետական և հասարակական հիմնարկ-ձեռնարկությունների մասնակցությունը ստուգատեսի կամպանիաներին դեռևս անբավարար է արտահայտվում. շրջանային գործկոմները և ստուգատեսի հանձնաժողովները շրջանների կենտրոնում չեն կազմակերպել ստուգատես բրիգադներ՝ մասնակցությամբ գյուղական աշխատողների, ստուգելու համար, թե շրջանի կազմակերպությունները վոր չափով են վերակառուցել իրենց աշխատանքները խորհրդին և գյուղական կազմակերպություններին ոժանդակելու և ղեկավարելու ուղղությամբ: Այդ հանձնաժողովները պետք է ստուգեն, թե ինչպես են կատարվել շրջգործկոմի կողմից խորհուրդների շրջանային համագումարի վորոշումները և ինչով է արտահայտվում շրջգործկոմի կենդանի կապը գյուղխորհուրդների հետ, և նրա ոժանդակությունն ու ղեկավարությունը խորհուրդների աշխատանքների վերակառուցման ուղղությամբ: Մի շարք շրջաններում շրջկենտրոնից գյուղ ուղարկելիս նախորոք խորհրդակցություններ չեն հրավիրվել, և անհրաժեշտ ցուցումներ չեն տրվել (Թալին, Դիլիջան և այլն). ստուգատեսի շրջանային հանձնաժողովները չու-

նեն աշխատանքի ծրագիր, գյուղբրիգադների խորհրդակցությունները շատ քիչ են լինում, դեռևս մի շարք շրջհանձնաժողովներ (Ղուրդուղուլի, Վաղպատ, Ախտա, Դիլիջան) իրենց նիստերում գյուղհանձնաժողովների ղեկուցումները չեն լսել և անհրաժեշտ ցուցումներ չեն տվել: Կամպանիայի բացատրական աշխատանքները պետք է հասցնել գյուղի բոլոր ողակներին և հասարակական ժողովին ու չքավորական խմբակներին: Մի շարք շրջաններում անբավարար է ընթանում ստուգատեսի աշխատանքների ուղղությամբ սոցմրցումն ու հարվածայնությունը. այդ աշխատանքները դեռ չեն հասել մինչև գյուղխորհուրդ, նրան կից սեկցիան, ստուգատեսի հանձնաժողով, նրա բրիգադները և այլն, մինչև իսկ ստուգատեսի շրջանային հանձնաժողովներից շատերը չեն կնքել սոցմրցման պայմանագիր շրջանների և հարևան հանրապետությունների հետ:

Մի քանի շրջգործկոմներ ոպորտունիստորեն թերագնահատում են ստուգատեսի աշխատանքները, որինակ՝ Ղափանի գործկոմը հեռագրում է հետաձգել հոկտեմբեր ամսին, Թալինի գործկոմը չի սկսում և Կենտգործկոմի հրահանգչին ասում է.—«Մենք ուժեր չունենք, դուք նստեք և կիրառեք այդ կամպանիան»: Ախտայի շրջանը դեռ մինչև սեպտեմբերի 1-ը վոչինչ չի արել այդ ուղղությամբ: Դրանք և մի քանի այլ շրջգործկոմներ կարծում են, վոր խորհուրդների ստուգատեսի կամպանիան մի առանձին աշխատանք է, և առանձին ուժեր պետք է տրամադրել այդ կամպանիան ավարտելու համար, չեն պատկերացնում, վոր այս կամպանիայի նպատակն է ապահովել գոյություն ունեցող կամպանիաներն ուժեղացնելու և նրանց կատարելու ու գերակատարելու գործը:

Ստուգատեսի սկզբնական աշխատանքները ցույց տվին, վոր այդ մի անհրաժեշտ կամպանիա յե խորհուրդների աշխատանքները վերակառուցելու համար. Դիլիջանի և Իջևանի շրջաններում մեր կատարած ստուգումից պարզվեց, վոր մի քանի գյուղերում (Ջարխեջ, Սեվքար, Աչաջուր և Ուզունթալա) խորհուրդները դեռևս անհրաժեշտ չափով չեն վերակառուցել իրենց աշխատանքները կոլտնտշարժման բնագավառում, չեն մասսայականացված կուս. և խորհրդային վերադաս որգանների վորոշումները կոլտնտեսականներին տրվող արտոնությունների, գործավարձի և այլ հարցերի վերաբերմամբ: Տեղի յեն ունեցել կուս. գծի աղավաղումներ, ինչպես որինակ՝ Աչաջուր գյուղում ունևորներին

խոտի և հացի կայուն պլաններ չտալը, ունեվոր տնտեսությունները ճիշտ կերպով չջոկելը, կուլակ տնտեսությունների հացի կայուն պլանները ժամանակին չտալու համար նրանց պատասխանատվության չենթարկելը և այլն, Սև-Քարի 541 տնտեսության մեջ վոչ մի ունեվոր տնտեսություն չունենալը, Զարխեչ գյուղում չքավորներին և միջակներին մսի կայուն պլան տալը, հացամթերման պլանները պարտադիր կերպով չքավոր և միջակ տնտեսություններին հասցնելը. Ուզունթալա գյուղում նույնպես ունեվոր տնտեսության կայուն պլան չեն տվել, իսկ մի քանի տնտեսություններ, վորոնք իրենց ներկա օբյեկտներով պետք է նկատվեն ունեվորներ, համարվել են միջակներ: Գյուղական խորհուրդները չունեն շերտավորման ցուցակներ, վորպեսզի հնարավոր լինի պարզել, թե տվյալ գյուղի վո՞ր տնտեսությունը ի՞նչ ունի և սոցիալական վո՞ր շերտին է պատկանում: 3-րդ վճռական տարվա փոխառության տոմսերը Աչաջուր գյուղում չքավորին և միջակին պարտադիր կերպով հանձնելը, Դիլիջանի շրջգործկոմի կողմից հացամթերման համար չքավորներին—միջակներին կայուն պլան տալու ուղղությամբ տեղերին արված կարգադրությունը, Դիլիջանի շրջանի Գոշ և մի քանի թուրքական խորհուրդների կողմից չքավորներից և միջակներից պարտադիր կերպով մթերում կատարելը,—և այսպես մի շարք կոպիտ սխալներ, վորոնք տեղերում թույլ են տրվել, և վորոնց վերացման համար համապատասխան օրգանները ժամանակին միջոցներ են ձեռք առել և ուղղել: Պետք է ասել, վոր հացամթերման գծով թույլ տրված սխալների հեղինակները յեղել են մեր կենտրոնական օրգանները, ինչպես օրինակ՝ Մատծողկոմատը, Կոլտնտկենտրոնը, Հացաանասնապահական Միությունը և Այգեգինկոոպը:

Թույլ է արտահայտվում շրջգործկոմների ղեկավարությունը խորհուրդներին կից չքավորական խմբակների նկատմամբ և այդ ուղղությամբ մինչեվ օրս վճռական միջոցներ չեն ձեռնարկվել գործկոմների կողմից:

Դիլիջանի, Ախտայի և Իջևանի շրջգործկոմները գյուղի աշխատանքներն ամրապնդելու տեսակետից մոբիլիզացիայի յեն յենթարկել շրջանի պատասխանատու աշխատակիցներից և գյուղ ուղարկել աշխատելու համար:

Կենտգործկոմի Կազմբաժնին կից սեպտեմբերի 5-ին կայացած Հանրապետական հիմնարկների ներկայացուցիչների խորհրդակցությանը, վորը հրավիրված էր «Զարյա Վաստոկա» թեր-

թի բրիգադների ղեկավարությամբ, մասնակցում եյին հանրապետական շահագրգռված հիմնարկների ներկայացուցիչները: Խորհրդակցությունը պարզեց, վոր դեռևս հանրապետական հիմնարկների կողմից անհրաժեշտ աշխատանքներ չեն կատարված ստուգատեսի կամպանիայի ուղղությամբ, մինչեվ իսկ Հողժողկոմատի և Կոլտնտկենտրոնի ներկայացուցիչները հայտարարում են, վոր յեթե ստուգատեսը խորհուրդների համար է, այլևս մենք ի՞նչ գործ ունենք: Խորհրդակցությունը մի շարք գործնական վորոշումներ հանեց կամպանիայի մասին և առաջարկեց համապատասխան հիմնարկներին անմիջապես անցնել աշխատանքի:

Վերոհիշյալ թերությունները վերացնելու և ստուգատեսի աշխատանքները հաջող կատարելու համար Կազմբաժնին կից հրավիրված խորհրդակցությունն արձանագրեց հետևյալը.—

ՀՍԽՀ Կենտգործկոմի Կազմբաժնին կից կազմխորհրդակցությունը, լսելով գյուղական խորհուրդների աշխատանքների ստուգատեսի կամպանիայի ընթացքի մասին ընկ. ընկ. Ստամբոլցյանի, Խոջամիրյանի, Սարգսյանի, Անանյանի և Նարինյանի ինֆորմացիոն զեկուցումները, արձանագրում է.—

1. Ընդհանուր առմամբ ծավալված են ստուգատեսի կամպանիայի մասսայական բացատրական աշխատանքները. տեղերում ստուգատեսի հանձնաժողովները ձեռնամուխ են յեղել գործնական աշխատանքի:

2. Տեղերում անբավարար դրության մեջ են գտնվում ինֆորմացիոն աշխատանքները. մինչեվ այժմ ինֆորմացիա չի ստացված Ղափանից, Մեղրուց, Գորիսից, Սիսիանից, Ստեփանավանից, Ծամչաղինից, Արթիկից, Աբարանից, Դարալագյազից և Լենինականից:

3. Մի քանի շրջաններում գոյություն ունի խորհուրդների ստուգատեսի կամպանիայի քաղաքական նշանակության թերագնահատություն, վորի հետևանքով դեռևս չեն սկսել ու չեն ծավալել աշխատանքները (Թալին, Ղափան):

4. 16 շրջաններում խորհուրդների ստուգատեսի կամպանիայի ծրագիրը հասցված է գյուղխորհուրդներին:

5. Միանգամայն անբավարար է շրջանային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ստուգատեսի կամպանիայում:

6. Հանրապետական կազմակերպությունները չեն մասնակցում ու օժանդակում աշխատանքներին:

7. Թույլ են ծավալված սոցմրցումն ու հարվածայնությունը ստուգատեսի աշխատանքներում:

Գյուղական խորհուրդների աշխատանքների ստուգատեսի կամպանիան հետագայում ավելի ևս ծավալելու և նկատված թերությունները վերացնելու համար կազմխորհրդակցությունը անհրաժեշտ և համարում.

1. Հանձնարարել Կազմբաժնին ավելի ևս ուժեղացնել ոպերատիվ ղեկավարությունը շրջանների նկատմամբ: Արձանագրել Անդրկենտգործկոմի կողմից շրջաններին ամրացված ընկերների տեղերը չմեկնելու փաստը. խնդրել Անդրկենտգործկոմից արագացնել մոբիլիզացիայի յենթարկված ընկերներին շրջաններն ուղարկելը:

2. Լրացուցիչ կերպով մոբիլիզացիայի յենթարկել Հայկենտգործկոմի անդամներից ևս 10 հոգու:

3. Խնդրել Հայկենտգործկոմի նախագահությունից և ՀԿ (բ) Կ Կենտկոմից պատասխանատվության կանչելու Թալինի շրջգործկոմի նախագահի տեղակալին և շրջկոմի քարտուղարին՝ խորհուրդների ստուգատեսի աշխատանքները թերագնահատելու և սաբոտաժի յենթարկելու համար:

4. Առաջարկել շրջանային և գյուղական ստուգատեսի հանձնաժողովներին ավելի ևս ծավալել մասսայական-բացատրական աշխատանքը բոլոր կոլտնտեսականներին, չքավոր ու միջակ անհատ տնտեսատերերին—վաղվա կոլտնտեսականներին ստուգատեսի աշխատանքներին ներգրավելու համար, մասնավորապես հրավիրելով կանանց առանձին ժողովներ, որինակ, վերցնելով Ղուրդուղուլուց:

5. Առաջարկել ստուգատեսի շրջանային հանձնաժողովներին անմիջապես հատուկ բրիգադների միջոցով ստուգել գյուղական խորհուրդների՝ ստուգատես կամպանիայի գծով կատարած աշխատանքները և ընձեռել միջոցներ նրանց ակտիվ մասնակցությունն այդ գործում ապահովելու համար:

6. Առաջարկել ստուգատեսի շրջանային և գյուղական հանձնաժողովներին ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը առանձին շրջանների գյուղերի ստուգատեսի հանձնաժողովների, բրիգադների, կոլտնտեսությունների, սեկցիաների և գյուղխորհուրդների անդամների միջև՝ աշխատանքները լավագույն ձևով կազմակերպելու համար:

7. Անհրաժեշտ համարել հրատարակել հատուկ բյուլլետեն-ներ, լուսաբանելով կամպանիայի ընթացը:

ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՍՏՈՒԳԱՏԵՍ ԿԱՏԱՐՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. Ողոստոսի 25-ից սկսել ստուգատեսի կամպանիայի աշխատանքները և ավարտել մինչև սեպտեմբերի 25-ը:

2. Հանձնարարել Կենտգործկոմի կազմբաժնին բոլոր շրջաններում կազմակերպել ստուգատեսի և պարզեվատրման հանձնաժողովներ:

3. Կազմբաժնին կից հրավիրել հանրապետական մարմինների ներկայացուցիչների խորհրդակցություն և կոնկրետ ցուցումներ տալ, թե որ հիմնարկությունը ինչ ձևով պետք է մասնակցի ստուգատեսի աշխատանքներին:

4. Կենտգործկոմի նախագահության միջոցով մոբիլիզացիայի յենթարկել Կենտգործկոմի անդամներին և Կենտգործկոմի ապարատից ու այլ հիմնարկներից 18 հոգու և կցել նրանց շրջաններին ստուգատեսի կամպանիան ղեկավարելու համար:

5. Ստուգատեսի կամպանիայի նպատակը լայն աշխատավորների սեփականություն դարձնելու համար շրջգործկոմների և շրջստուգատեսի հանձնաժողովների միջոցով գյուղերում կազմակերպել կոլտնտեսականների կանանց, չքավոր և միջակ գյուղացիության լայն ժողովներ, որտեղ հատուկ զեկուցումներ տալ ստուգատեսի նշանակության մասին:

6. Կենտրոնական հանձնաժողովի տրամադրության տակ հատուկ գումարներ դնել լավ աշխատող խորհուրդներին պարգեվատրելու համար:

7. Ստուգատեսի աշխատանքները լայն չափով ծավալել այն հաշվով, որ կամպանիան խթան հանդիսանա նոր չքավոր և միջակ տնտեսությունների ներգրավմանը կոլտնտեսությունների մեջ:

8. Հանձնարարել ընկ. Պ. Սարգսյանին հրատարակել յերկու բյուլլետեն, մեկը կամպանիայի սկզբում, իսկ մյուսը կամպանիայի վերջում, ամփոփելով ստուգատեսի արդյունքները:

9. Հանձնարարել Կենտգործկոմի կազմբաժնին կամպանիայի վերջանալուց հետո բոլոր շրջաններում հրավիրել գործկոմների ընդլայնած պլենումներ և կոնֆերենցիաներ, քննության առնել ստուգատեսի արդյունքները և նոր գործնական միջոցներ ձեռք առնել ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները վերացնելու և խորհուրդների աշխատանքների վերակառուցման ուղղությամբ:

10. Շրջգործկոմներին և շրջաններին կցված ընկերների միջոցով կամպանիայի ընթացքում ծավալել սոցմրցում ու հարվածայնություն այն հաշվով, վոր այդ աշխատանքները հասնեն շրջգործկոմ, ստուգատես հանձնաժողով, գյուղհանձնաժողով, բրիգադները, սեկցիաները և խորհրդի առանձին անդամներին:

11. Կազմբաժնի միջոցով սոցմրցման պայմանագիր կնքել Ադրբեջանի Կենտգործկոմի հետ:

12. Սեպտեմբերի 15-ին կենտհանձնաժողովի նիստում լսել Թալինի և Ղամարլուի շրջստուգատեսի հանձնաժողովների զեկուցումները կատարված աշխատանքների մասին:

13. Սեպտեմբերի 25-ին կենտհանձնաժողովի նիստում լսել Ախտայի և Վեդիի ստուգատեսի շրջհանձնաժողովի ու Իջևանի շրջանից Սև-Քարի հանձնաժողովի զեկուցումները կատարված աշխատանքների մասին, նիստը հրավիրելով Ռադիոստուդիայում:

14. Կազմակերպել ռադիոյի միջոցով յերկու զեկուցում, ստուգատեսի ընթացքի մասին:

15. Սեպտեմբերի 9-ին ռադիոյի միջոցով հաղորդել Դիլիջանի շրջանի Ջարխեջ գյուղի և Ղուրդուղուլու շրջհանձնաժողովների զեկուցումները ստուգատեսի մասին:

16. Սեպտեմբերի 26-ին կազմակերպել Ռադիոկանչ Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների խորհուրդների ստուգատեսի ընթացքի համար:

17. Ստուգատեսից հետո գյուղերում հրավիրել հասարակական լայն ժողովներ մեծ թվով կանանց մասնակից անելու համար հանրապետության սահմաններում, վորտեղ կան մանկական մսուրներ, մանկահրապարակներ և մանկապարտեզներ, այդպիսիները բանալ յերեկոները փոքրահասակ յերեխաներին այնտեղ մինչև ժողովի վերջը խնամելու համար:

18. Հայկինոյի միջոցով կամպանիայի ընթացքում բոլոր շրջաններում յեղած կինոներն օգտագործել ձրի:

19. Հրապարակել պլակատներ և լոզունգներ ստուգատեսի մասին:

20. Կազմել նախագիծ լավ աշխատող խորհուրդների աշխատանքների վորակը վորոշելու և նրանց պարգևատրման համար:

21. Պրոֆմիությունների միջոցով կազմակերպել բրիգադներ և մոբիլիզացիայի յենթարկել հաշվային աշխատողներ՝ գյուղերն ստուգատեսի ուղարկելու համար:

22. ԼԿՅԵՄ կենտկոմի միջոցով մոբիլիզացիայի յենթարկել 200 կոմյերիտականներ, վորոնցից 90-ը քաղաքից, իսկ 110 շրջակտեղից և ուղարկել գյուղխորհուրդներում աշխատելու:

Կենտ. Հանձնաժողովի նախագահ՝ (ԴԱՇՏՈՅԱՆ)

Քարտուղար՝ (ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ)

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ստուգատեսը կատարելու համար ղեկավարվել՝ օգոստոսի 18-ին «Զարյա Վաստոկայում» հրապարակված Անդրկենտգործկոմի վորոշումով և Հայկենտգործկոմի օգոստոսի 23-ի շրջաբերականով:

2. Ներկա ետապում ստուգատեսը կատարելիս անհրաժեշտ է նախատեսնել դասակարգային թշնամու և անհարազատ տարրերի փորձերը՝ օգտագործելու խորհուրդների աշխատանքների մասսայական ստուգումը Խորհրդային Իշխանությունը վարկաբեկելու նպատակով: Ստուգատեսը պետք է հանդիսանա կուլակի և բեկերի վրա կատարվող հարձակման շարունակությունը, մերկացնի նրանց և նրանց կողմնակիցներին բնակչության լայն մասսաների առաջ և արմատախիլ անի դասակարգային թշնամու մնացորդները գյուղում: Սակայն այդ աշխատանքներում հախուռնություններ չպետք է թույլ տալ: Անհրաժեշտ է հիշել, վոր այդ պայքարում մասսաներին պետք է մոբիլիզացիայի յենթարկել սկզբունքային-դասակարգային վորոշակի դիրքերով:

3. Միաժամանակ պետք է նկատի առնել հետևյալ սխալները, վորոնք հնարավոր են ստուգատեսը կատարելիս.—

ա) Ստուգատեսի վրա չպետք է նայել որպես առանձնահատուկ կամպանիայի, այլ պետք է հիշել, որ այդ լայն մասսաներին ընթացիկ տնտեսական կամպանիաների պլանները կատարելու և դերակատարելու աշխատանքների մեջ ներգրավելու և այդ աշխատանքներին ոժանդակելու մի յուրահատուկ միջոց է:

բ) Ստուգատեսի շրջանային հանձնաժողովները չպետք է փոխարինեն գյուղական հանձնաժողովներին և նրանց սեկցիաներին, չպետք է իրենց հակադրեն վերջիններին, այլ սոցմրցման և հարվածայնության մեթոդներով պետք է բարձրացնեն լայն մասսաների ակտիվությունը, նրանց ստեղծագործական աշխատանքները դնելով Խորհրդային աշխատանքի հունի մեջ, աշխուժացնելով սեկցիաների և խմբակների աշխատանքը, վերակազմելով այն աշխատանքի ընթացքում:

գ) Ստուգատեսը չպետք է վերածել ստուգման նեղ իմաստով կամ գյուղխորհուրդների աշխատանքների սոսկ մասսայական ստուգման, այլ պետք է աչքի առաջ ունենալ ստուգատեսի՝ աշխատավորներին մոբիլիզացիայի յենթարկող հիմնական կողմը:

4. Ստուգատեսը, առաջին շրջանում նկատելով որպես գյուղի բոլոր ողակների և մարդկանց մասսայական ստուգում, սկզբից և յեթ պետք է այնպես կազմակերպել, որ բացատրական և ստուգիչ աշխատանքներին զուգընթաց հատուկ հանձնաժողովների և բրիգադների միջոցով ու սոցմրցման հիմունքներով կարելի լինի ներգրավել մասսաներին տնտեսական քաղաքական կամպանիաների առաջադրանքները կենսագործելու աշխատանքների մեջ: (Տես Անդրկենտգործկոմի որոշման 2-րդ կետը «Զարյա Վոստոկա» թերթի 18-ին):

5. Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել արտադրության մեջ իրենց արդարացրած սոցմրցման ձևերը և մեթոդները առորյա խորհրդային աշխատանքների ասպարեզ տեղափոխելու վրա, սոցմրցումով սկսելով ստուգատեսի աշխատանքները:

6. Մրցման կազմակերպումը՝ հաշվառում և սիստեմատիկ օպերատիվ ղեկավարություն է պահանջում ստուգատեսի շրջանային հանձնաժողովի կողմից. վերջինն իր ժամանակին պետք է ուսումնասիրի լավագույն շրջանների փորձը և փոխադրի այն յետ մնացող շրջանները, առաջ մղի յետ մնացողներին, միաժամանակ թույլ չտալով աշխատանքի դիմադրություն, մոցնելով անձնական պատասխանատվությունը ամեն մի շրջանի համար վերեվից

մինչև ներքևը, փոխարինելով աշխատելուց հոգնածներին խուսափողներին:

Ստուգատեսի գյուղական հանձնաժողովների բոլոր ներկայացուցիչները պետք է հաստատվեն շրջգործկոմի կողմից:

7. Շրջանային հանձնաժողովների կազմը վորոշելիս ղեկավարվել «Զ. Վ.»-ում հրապարակված Անդրկենտգործկոմի վորոշմամբ: Հատուկ ուշադրություն դարձնել գյուղլիազորների ընտրության վրա, խնամքով պատրաստել գյուղլիազորների և ստուգատեսի ակտիվի հրահանգչական խորհրդակցությունները, վորոնք պետք է դումարվեն սեպտեմբերի 5-ից վոչ ուշ:

8. Շրջանային հանձնաժողովների աշխատանքների բովանդակությունն են կազմում.

ա) Հսկողություն գյուղում կատարվող աշխատանքների վրա և օգնություն գյուղերին՝ գյուղհանձնաժողովների, ինչպես և ներսում բրիգադների և սեկցիաների միջով սոցմրցում կազմակերպելու գործում, ստուգատեսի վերաբերյալ մարմիններին տեղեկություններ հաղորդել ստուգատեսի ընթացքի մասին. բ) Շրջանային հանձնաժողովները պետք է նախաձեռնողներ հանդիսանան միջշրջանային մրցման գործում, ընդվորում մրցման ցուցանիշներ պետք է ծառայեն.

1) տնտեսական քաղաքական պլանների կատարումն ու գերակատարումը.

2) շրջանային համագումարների վորոշումների լավագույն կատարումը.

3) դեպի կոլտնտեսությունները կամավոր նոր հոսանքի կազմակերպումը.

4) ներքին միջոցների հայտնաբերումը շրջանի կուլտ-կենցաղային սպասարկման և տնտեսությունն արագորեն և լրիվ չափով զարգացնելու համար:

5) Շրջանային բոլոր կազմակերպությունների և իր շրջգործկոմի աշխատանքների աշխուժացումը և վերակառուցումը՝ գյուղի աշխատանքների ղեկավարությունը բարելավելու ուղղությամբ:

6) Հայտնաբերված և ամրացված ակտիվի քանակը և նրա նկատմամբ կատարված սիստեմատիկ դաստիարակչական աշխատանքը:

7) Բոլոր բնագավառների լավագույն աշխատանքների և առաջարկների համար կիրառվող պարգևատրման կարգը:

9. Շրջհանձնաժողովների աշխատանքների մեջ և մտնում շրջանային կազմակերպությունների աշխատանքների ստուգումը՝ նրանց կողմից շրջանային համագումարների վորոշումները կիրառելու ուղղությամբ, վորի համար պետք է կազմվեն խառը ստուգիչ բրիգադներ դյուղի ներկայացուցիչների մասնակցությամբ, նաև շրջգործկոմի յուրաքանչյուր անդամի աշխատանքների ստուգումը, նպատակ ունենալով կազմակերպել, աշխատանքից ամենաչատ խուսափողներին հետ կանչելու պահանջ ներքևից, ծանոթացնելով ընտրողներին նրանց գործունեությանը: Բացի դրանից, պետք է պարզել շրջգործկոմի առանձին անդամների թույլ աշխատանքի պատճառները և նախապատրաստել շրջակտիվի համար դասընթացք-կոնֆերենցիների և սեմինարների կազմակերպումը:

10. Ստուգատեսի աշխատանքներին պարտադիր կարգով մասնակից դարձնել կենտրոնից գործուղված և շրջանում գտնվող բոլոր անձանց, հաշվի առնելով կիրառվող կամպանիաների նշանակությունը:

11. Ստուգատեսի ընթացքում շրջհանձնաժողովները պարտավոր են հետևյալ շրջանային խորհրդակցությունները դումարել.

1) Շրջգործկոմի վոչ ակտիվ անդամների, քննության առնելով թույլ գործունեության պատճառները և նշելով կոնկրետ ուղիներ նրանց աշխատանքը հետագայում բարելավելու համար:

2) Շրջգործկոմի ավելի ակտիվ և 2-ից ավելի դումարման ժամանակ ընտրված անդամների, քննության առնելով շրջգործկոմի և մյուս կազմակերպությունների աշխատանքների վերակառուցման հարցը:

3) Պարտիզանների և քաղաքացիական կռիվների հերոսների, քննության առնելով ստուգատեսի և շրջանի ու դյուղի աշխատանքներին նրանց սիստեմատիկորեն և պլանայնորեն մասնակից դարձնելու հարցը:

4) Կենտրոնական կառավարական հաստատությունների և կազմակերպությունների այն անդամների ու վոխանդամների, վորոնք աշխատում են շրջաններում, այդ աշխատանքին վերաբերող հարցերը քննելու համար:

5) Խորհուրդների միատեսակ սեկցիաների ղեկավարների, յուրաքանչյուր սեկցիայի աշխատանքները բարելավելու հարցի մասին:

6) Զբավորական խմբակների ղեկավարների, խորհատեսությունների և կոլտնտեսությունների, Մ. Տ. Կայաններին կից կանց արտադրական խորհրդակցությունների և խորհրդային խմբակների ղեկավարների:

12. Ստուգատեսի վողջ աշխատանքն այնպես կատարել, վորպեսզի ապահովվի ստուգատեսի առավելագույն արդյունավետությունը, ամրացվի ստուգատեսում հայտնաբերված ակտիվը: Ստուգատեսի վերջում մշակել շրջանի տնտեսական զարգացման 32 թվի պլանը, հիմք ունենալով առանձին սեկցիաների և խմբակների աշխատանքի մանրամասնորեն մշակված պրակտիկ որացուցային պլանները, ցույց տալով առանձին ձեռնարկումների կենսագործման ժամկետները և աշխատանքի յուրաքանչյուր մասի համար պատասխանատու անձանց, հասցնելով այդ պլանները յուրաքանչյուր սեկցիայի առանձին անդամներին:

13. Ստուգատեսի վողջ աշխատանքի վճռական ողակը դյուղն է, ուստի շրջհանձնաժողովը շրջգործկոմի հետ միասին պետք է ապահովեն դյուղի աշխատանքի հաջողությունը: Այդ հաջողության նախապայմանն է բոլոր աշխատավորներին ստուգատեսի մասին մանրամասն տեղեկություն հաղորդելն այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսականի և անհատականի—վաղվա կոլտնտեսականի համար պարզ լինեն ստուգատեսի խնդիրները: Շրջգործկոմի լիազորները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն և սիստեմատիկորեն ցույց տան, վոր անթույլատրելի է ստուգատեսի աշխատանքներն անջատել ընթացիկ կամպանիաների առաջադրանքները կատարելուց, ինչպես անթույլատրելի է բացատրական ինֆորմացիոն աշխատանքն անջատել ստուգատեսը ծավալելու ընթացիկ աշխատանքներից:

14. Հատկապես ակտիվ բնույթ պետք է կրի պատի թերթերի և դյուղթղթակիցների մասնակցությունն ստուգատեսին:

Անհրաժեշտ է վոչ միայն լույս ընծայել հատուկ պատի թերթեր, այլև լայն կազմակերպել կենդանի տեղեկատու բյուրեղներ և թերթեր, նպատակ չդարձնելով նրանց չափազանց լուրջ բովանդակությունը և գեղարվեստական ձևավորումը, այլ ձգտելով առավելագույն գործնականության և բնակչության առավելագույն ընդգրկմանը:

15. Ստուգատեսի աշխատանքներին պետք է մասնակից դարձնել նաև կոմյերիտականներին, պիոներներին և աշակերտությանը, նրանց միջոցով գլխավորապես պետք է կազմակերպել ա) կապի սպասավորություն, բ) ինֆորմացիան, գ) եստաֆետ աշխատանքների ընթացքի և տնտեսական կամպանիաների կատար-

ման մասին, դ) գյուղխորհուրդների աշխատանքների բարելավման վերաբերյալ խորհրդակցությունների և զրույցների արձանագրությունը:

16. Ստուգատեսի աշխատանքները գյուղում պետք է ընթանան հետևյալ հաջորդականությամբ (մոտավորապես).—

1) Լիազորի հրահանգչական զեկուցումը գյուղական ակտիվում ստուգատեսի խնդիրների մասին:

2) Այդ ակտիվի ուժերով լայն ինֆորմացիա յե դրվում զանազան խորհրդակցություններին և սեկցիաների ու խմբակների ժողովներին ստուգատեսի և բոլոր ընթացիկ կամպանիաների մասին, միաժամանակ կազմվում են ստուգիչ բրիգադներ և տընտեսական կամպանիաների համար տրված պլանները կատարող բրիգադներ: Այդ խորհրդակցությունները քննարկում են տրված պլանները և մշակում են հանդիպական պլանները:

Տանոթություն. 1. Անհրաժեշտ է գումարել խորհրդակցություն այս հրահանգի 11-րդ կետում ցույց տրված ձևով, հատուկ ուշադրություն դարձնելով գյուղխորհրդի 3-ից ավելի գումարման անդամների և տեղյալ գյուղից ընտրված՝ չրջգործկոմի անդամների խորհրդակցության վրա:

2. Եթե բնակչությունը զբաղված է դաշտային աշխատանքներով, խորհրդակցությունները պետք է գումարել աշխատանքի վայրում, կանգ չառնելով հավաքվող բրիգադների և խմբակների փոքրաթվության առաջ:

3) Կազմակերպել ստուգիչ բրիգադներ նակաղները և առանձին պատգամավորներին ստուգելու համար, հայտնաբերել գյուղխորհուրդների սեկցիաների և խմբակների արդյունավետ աշխատանքը դանդաղեցնող պատճառներն ընդհանուր առմամբ, անհատական զրույցների և խորհրդակցությունների միջոցով:

4) Ստուգիչ բրիգադների հաշվետվությունները սեկցիաներում, վորտեղ պետք է քննության առնել նրանց առաջարկները և մշակել վերակառուցման պլաններ և այդ պլանները կենսագործելու կոնկրետ ձեռնարկումներ:

5) Պատգամավորների հաշվետու զեկուցում ընտրողների առաջ և ստուգիչ բրիգադների հարակից զեկուցումները:

6) Լայն ինֆորմացիա սոցմրցման ընթացքի մասին ստուգատեսում, ինչպես գյուղխորհրդի նիստում:

7) Ստացվող առաջարկությունների հավաքումը և մշակումը:

8) Արդյունքների ամփոփումը և 1932 թ. աշխատանքների պլանի մշակումը: Լավագույն ակտիվիստների և աշխատավորների պարգևատրումը, համամանրկոլեկտիվական մրցանակաբաշխության թեկնածուներ վորոշելը:

17. Ստուգիչ բրիգադներ են կազմվում, որինակ, հետևյալ հարցերի համար, հարմարեցնելով յուրաքանչյուր գյուղի պայմաններին.

1) Նակաղի համար.

2) Առանձին պատգամավորների աշխատանքն ստուգելու համար.

3) Սեկցիաների և խմբակների աշխատանքն ստուգելու համար.

4) Աղգային փոքրամասնությունների հարցերի վերաբերյալ.

5) Կանանց ազատագրելու հարցերի առթիվ.

6) Ստուգատեսի ընթացքում ստացվող ցուցումները և առաջարկությունները քննելու համար.

7) Բացի ստուգիչ բրիգադներից, պետք է կազմակերպել առանձին բրիգադներ տնտեսական և կուլտուրական պլանները կատարելու համար, առանձին ուշադրություն դարձնելով այդ բրիգադների վրա և նրանց մասնակից դարձնելով բնակչության մեծամասնությանը: Այս բրիգադների թվում պետք է կազմակերպել նաև բրիգադներ գյուղի ներքին միջոցները հայտնաբերելու համար, հանդիպական պլանները լայնացնելու նպատակով, գյուղի չրջակայքում յեղած հանքերը և այլ հարստությունները ոգտագործելու և մասնավորապես մետաղի կտորներ և ոգտագործելի հումք (ուտիլ-սիրյո) հավաքելու համար:

8) Գյուղի ավելցուկ բանուժը հայտնաբերելու բրիգադ, այդ բանուժը ձեռնարկություններն ուղարկելու հնարավորությունը պարզելու համար:

18. Բոլոր գյուղական հանձնաժողովները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն իրենց աշխատանքի մասին սիստեմատիկ ինֆորմացիա տալու անհրաժեշտության վրա՝ մամուլի միջոցով փորձի փոխանակություն կազմակերպելու համար, պետք է ժամանակին զեկուցումներ ներկայացնեն ստուգատեսի վերադաս հանձնաժողովներին, կազմակերպման ստուգատեսի եստաֆետներ ժամկետային զեկուցագրերի համար, չմոռանալով, վոր փորձի փոխանակությունը հնարավորություն կտա աշխատանքի ընտ-

ելու լավագույն օրինակներ և խուսափելու հնարավոր սխալներից։ Անհրաժեշտության դեպքում ստուդատեսի հանձնաժողովները դիմում են վերադաս հանձնաժողովների ոգնության։

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏՈՒԴԱՏԵՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՍՍՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ՁԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Տվյալ դրույթները վոչ թե թեզիսներ են, վորոնց հիման վրա բառացիորեն պիտի կառուցվեն զեկուցումները, այլ այն հիմնական մոմենտների թվարկումը, վորոնք անպայման պետք է լուսաբանվեն այն զեկուցումներում, վորոնք կառուցված են տեղական փաստերի և նյութերի հիման վրա։

Ավելի մեծ խնամքով պետք է նախապատրաստվեն խմբակներում և սեկցիաներում տրվելիք զեկուցումները, վորովհետև ամեն մի խմբակի և սեկցիայի համար անհրաժեշտ է, վորքան կարելի յե, կոնկրետ ընդգծել վոչ միայն նրանց ընդհանուր խնդիրները, այլ և գործնական աշխատանքները՝ ստուդատեսի տնտեսա-ֆինանսական կամպանիաները կիրառելու և հետագայում աշխատանքները վերակառուցելու համար։

Այստեղ պետք է հաշվի առնել, վոր սեկցիաները և խմբակները մեկուսացած միավորներ չեն, այլ մի որդանական ամբողջություն և ամեն մի կիրառվող կամպանիայի ընթացքում յուրաքանչյուր խմբակ և սեկցիա ունի իր հատուկ անելիքները։ Որինակ, մթերման կամպանիայում... սեկցիան կազմակերպչական աշխատանք է կատարում, կուլտ-սեկցիան՝ պրոպագանդիստական աշխատանք, չքավորական խմբակը պարզում է մթերման լրացուցիչ աղբյուրները, կանանց արտադրական խորհրդակցությունները նախաձեռնում են կանանց լավագույն մասնակցություն ապահովող կենցաղային ձեռարկումների կամ, որինակ, բերքահավաքի կամպանիայում գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները մշակում են կազմակերպչական աշխատանքային մոմենտները՝ բրիգադաների բաժանելը, առանձին հողամասերի բերքահավաքի հերթականությունը բանուժի դասավորումը, հավաքած մթերքի տեղափոխումը։

Կուլտ-սեկցիան կատարում է կուլտ-կրթական աշխատանք բերքահավաքի կազմակերպման լավագույն ձևերի, հավաքած մթերքների հետ խնամքով վարվելու հարցերի շուրջը, բացատրում է այդ մթերքների նշանակությունը չրջանի զարգացման և հանրապետության համար։

Կանանց խորհրդակցությունը նույնպես այստեղ կանանց լավագույն մասնակցություն ապահովող ձեռնարկումներ է մշակում և կիրառում և այլն։

1. Զեկուցման առաջին մասում անհրաժեշտ է պարզաբանել Ժողովականներին, թե տվյալ ետապում ինչ են պահանջում կուսմակերպությունը և Խորհուրդների 6-րդ համագումարը գյուղխորհուրդներից, այսինքն՝ ինչ է նշանակում «Բարձրացնել գյուղխորհուրդների, վորպես գյուղում կուսակցական գլխավոր գիծը կիրառողների դերը» կոնկրետ լոզունգը, մանրամասն բացատրել, թե ինչո՞ւ «այն գյուղխորհուրդները, վորոնք իրենց աշխատանքները չեն վերակառուցի համաձայն մասսայական կոլեկտիվացման հետ կապված նոր խնդիրների, և չեն գլխավորի կոլտնտեսաշարժումը, գործնականում կհամարվեն կուլացային գյուղխորհուրդներ, անընդունակ սոցիալիստական շինարարության քաղաքականությունը կիրառելու» (ԽՍՀՄ 6-րդ համագումարի վորոշումը)։

2. Մանրամասնորեն լուսաբանել տվյալ չրջանի և գյուղի մոտիկ ժամանակաշրջանի սոցիալիստական շինարարության հարցերը։ Լուսաբանել այդ հարցերն այնպես, վորպեսզի նրանք հասկանալի դառնան ու կապակցվեն այս կամ այն խմբակի կամ սեկցիայի առաջ ծառացած հերթական հրատապ աշխատանքների հետ, և հնարավոր լինի ընդհանուր խնդիրներից անցնել մասնավորներին։

3. Պարզաբանել, վոր այդ խնդիրները կենսագործելու ասպարեզում խմբակների և սեկցիաների լավագույն մասնակցությունը կարտահայտվի նրանով, յերբ կկիրառեն դասակարգային հստակ գիծը, կմերկացնեն կուլակներին, բեկերին և նրանց գործակիցներին և սոցմրցման ու հարվածայնության հիմունքներով մոբիլիզացիայի կենթարկեն մասսաներին։

4. Այդպիսով, գյուղխորհուրդների աշխատանքների վերակառուցման հիմնական պահանջներն են.—

ա) Անողոք պայքար դասակարգային թշնամու և նրա կողմնակիցների դեմ, նրանց յերևան հանելը և արմատախիլ անելը։

բ) Սիստեմատիկ աշխատանք նորանոր կոլտնտեսականներ ներգրավելու համար, բացառապես կամավորության հիմունքներով։

գ) Խորհրդային Իշխանության հերթական ձեռնարկումների պլանները և առաջադրանքները ժամանակին լայն մասսաներին

հասցնելու ընդունակություն այդ մասսաների կազմակերպումը և պլանները գործնականորեն կատարելու և դերակատարելու համար, սոցմրցման և հարվածայնության հիմունքներով:

5. Վարպետ մրցման և հարվածայնության անհրաժեշտ միջոց լավագույն հասարակական աշխատողների և հարվածայիններին մշտապես խրախուսում և պայքար հասարակական աշխատանքներում և սեփական շարքերում ակտիվ կերպով աշխատելուց սիստեմատիկորեն խուսափողների դեմ:

6. Հայտնաբերել այն պատճառները, թե գյուղխորհուրդների, սեկցիաների և խմբակների մեծամասնությունը ինչո՞ւ դեռևս չի վերակառուցել իր աշխատանքները՝ համաձայն այդ խնդիրները (անհարազատ տարրերի խցկվածություն, կադրերի թուլություն, պատասխանատվության բացակայություն, ակտիվի թուլություն, աշխատանքի հին ձևեր, ինքնահոս, զանազան կամպանիաներն իրար հետ կապելու անընդունակություն):

Ինչպես հիմնական պատճառ, պետք է ընդգծել սոցմրցման և հարվածայնության բացակայությունը:

7. Ինչ նշանակություն ունի սոցմրցումն արդյունաբերության մեջ, ինչպես է կազմակերպված և ինչ գործնական ոգուտ է տալիս: Սոցիալիստական շինարարության խոշոր հաջողություններն այս վերջին յերկու տարվա ընթացքում առաջացել են չնորհիվ բնակչության լայն մասսաների սոցմրցման: Այստեղ առաջ բերել նավթաարդյունաբերության խոշոր ցուցանիշները: Ցույց տալ, որ պլանը մինչև առանձին բանվորը և գյուղացին հասցնելը, սոցմրցման հիմքն է կազմում, յերբ ամեն մի անհատ իրեն պատասխանատու յե զգում իր վրա դրված կոնկրետ պարտականության համար, որով ապահովվում է յուրաքանչյուրի խստապահանջությունը ոչ միայն դեպի իր սեփական անձը, այլ և դեպի իր հարևանը, հնարավորություն է տրվում անողոք պայքարելու անբանների և դասալիքների դեմ սեփական շարքերում: Աշխատանքի այդպիսի կազմակերպումը յուրաքանչյուր աշխատավորի դարձնում է սոցիալիստական ֆրոնտի գիտակից մարտիկ: «Սոցիալիստական մրցումը աշխատանքը դարձնում է պատվի, արիության և քաջության գործ» (Ստալին):

8. Առաջավոր ձեռնարկությունների մրցման փորձն ինչպես ոգտագործել և կիրառել գյուղի արտադրական և հասարակական աշխատանքների մեջ: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել սոցմրցումն ու հարվածայնությունը կազմակերպելու ուղղությամբ

վերջին տարիների ընթացքում բանվորների մղած պայքարի փորձը: Անթույլատրելի յե վերևից պատրաստի մտացածին ձևերի առաջադրումը. ինքը՝ մասսան ամեն որ և ամեն ժամ կառաջադրի սոցմրցման և հարվածայնության կատարելագործված ձևերը: Սակայն սոցմրցման փորձը ձեռնարկություններում և կոլտնտեսություններում սահմանել է հետևյալ պահանջները, որոնք ապահովում են սոցմրցման զարգացումը, և այդ պահանջները պետք է առաջադրվեն նաև գյուղի խորհրդային և հասարակական աշխատանքներում կիրառվող սոցմրցմանը:

ա) Աշխատանքի հաշվառում, բ) ծրագիր, որը պետք է լինի անպատճառ որացուցային մինիմալ ժամկետներով. ամեն մի սեկցիայի ծրագրում նախատեսնել բրիգադների աշխատանքները. բացի այդ, պետք է ունենալ առանձին բրիգադների աշխատանքների ծրագիր, գ) դիմազրկության լիկվիդացիան, այսինքն՝ անձնական պատասխանատվությունն աշխատանքի յուրաքանչյուր ասպարեզում, յուրաքանչյուր բրիգադի համար, դ) աշխատանքի պարբերական ստուգում, ե) լավագույն աշխատակիցների խրախուսանք, անդործների անընդհատ հետապնդում, զ) աշխատանքների փորձերի և լավագույն ձևերի լայն փոխանակություն առանձին բրիգադների, սեկցիաների և գյուղերի միջև:

Ը. Վորպեսզի հնարավոր լինի այդպես աշխատել, անհրաժեշտ է ստուգել աշխատանքների բոլոր ոլորները, աշխատող ամբողջ մասսան, Հայտնաբերել գյուղի սոցիալիստական վերակառուցման ենթուղիաստներին, ներգրավել նրանց ակտիվ աշխատանքի և գյուղում ամեն մի աշխատավորի ներգրավել աշխատանքի այն բնագավառը, որը նրան ավելի յե հետաքրքրում:

Գյուղական խորհուրդների լավագույն նախագահների, քարտուղարների, անդամների, ինչպես և կոլտնտեսականների ու անհատականների—գյուղում խորհրդային աշխատանքի ենթուղիաստների, լավագույն սեկցիաների և ընդհանուր առմամբ գյուղխորհուրդների, ինչպես և սոցիալիստական մրցության զարգով առավելագույն արդյունքներ ձեռք բերած և այդ արդյունքներն ամրապնդած ստուգատեսի բրիգադների և հանձնաժողովների ջանքերը խրախուսելու համար Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վճռել են հիմնել պարգևատրման հատուկ ֆոնդ՝ 50·000 ռուբլու սահմաններում:

Պարգեվատրվողներն ստանալու են լրացուցիչ արձակուրդներ, կուրորտների ուղեւորմաներ, գործուղումներ և եքսկուրսիաներ դեպի ԽՍՀՄ լավագույն խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները, գրադարանները և դրամ:

Ստացված պարգեվները գյուղական խորհուրդների, սեկցիաների, ստուգատեսի հանձնաժողովների, բրիգադների և խմբակների հայեցողությամբ գործադրվելու են կուլտուր-կենցաղային ձեռնարկումների վրա, վորոնց նախահաշիվները կազմվում են վերջինների կողմից յեվ կիրարկվում են շրջանային գործկոմների կողմից հաստատվելուց հետո:

Համաձայն վերոհիշյալ վորոշման պարգեվատրվելու են 15 գյուղական խորհուրդներ, 15 ստուգատեսի հանձնաժողովներ, 10 հոգի-ստուգատեսի աշխատանքները լավագույն ձեվով կազմակերպելու համար և 20 հոգի՝ խորհրդային աշխատանքներն ու քաղաքական-տնտեսական կամպանիաները հաջող կազմակերպելու և տրված պլանները կատարելու ու գերակատարելու համար:

Ստուգատեսի պարգեվատրման ցուցանիշներն են հանդիսանալու

ա) ստուգատեսի ընթացքում հերթական տնտեսական կամպանիաների համար տրված և հանդիպական պլանների կատարումը ու գերակատարումը.

բ) ստուգատեսի ընթացքում դեպի կոլտնտեսությունները նոր հոսանք կազմակերպելը.

գ) սեկցիաների աշխատանքների լավագույն հանդիպական պլանները և այդ պլանների կենսագործման կազմակերպումը.

դ) ստուգատեսի մեջ ներգրավվածների թիվը.

ե) ստուգատեսի ընթացքում խորհրդային աշխատանքների համար հայտնաբերված նոր ակտիվի հետագա ամրացումը.

զ) տրված ցուցմունքների և առաջարկությունների քանակը և նրանց իրագործումը:

Լավագույն գյուղական խորհուրդներին պարգեվատրելու համար ցուցանիշներն են հանդիսանալու՝

ա) հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական, քաղաքական և կուլտուրական կամպանիաների համար տրված առաջադրանքների կատարումը և գերակատարումը.

բ) ընտրողների նակազների լավագույն կատարումը.

գ) խորհրդային աշխատանքի մեջ ներգրավվածների թիվը.

դ) խորհրդային ակտիվի նկատմամբ կատարած դաստիարակչական աշխատանքը.

ե) աղգային փոքրամասնություններ ունեցող գյուղխորհուրդների համար—աշխատանքներն այդ փոքրամասնության մեջ:

Պարգեվատրության համար թեկնածուների ընտրությունը կատարելու յե հետեվյալ կարգով.

ա) շրջգործկոմները ընտրում են շրջանի լավագույն թեկնածուներին, ընդվորում ստուգատեսի գծով թեկնածուները նախապես նշանակվում են ստուգատեսի հանձնաժողովների կողմից.

բ) հանրապետությունների և ինքնավար մարզերի կենտգործկոմներն ընտրում են ներկայացված թեկնածուներից լավագույններին ստուգատեսի Անդրկովկասյան Հանձնաժողովին ներկայացնելու համար.

գ) ստուգատեսի կենտրոնական հանձնաժողովը թեկնածությունները ներկայացնում է Անդրկենտգործկոմի Նախագահության ի հաստատություն:

Այս վորոշմամբ պարտավորություն է դրված «Զակկնիգայի» և հանրապետությունների պետհրատների վրա, կազմակերպել մրցանակաբաշխություն՝ ստուգատեսի և գյուղական խորհուրդների աշխատանքների լավագույն նկարագրության համար:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ, ԳԱՆԴԱՏՆԵՐԸ ՅԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

1. Գյուղխորհուրդների ստուգատեսի և վերակառուցման ընթացքում բնակչության կողմից տրված ցուցումները և առաջարկություններն ամենաարագ կերպով առաջ մղելու, իրագործելու համար ստուգատեսի գյուղական և շրջանային հանձնաժողովներին առընթեր անմիջապես կազմել հատուկ բրիգադներ:

2. Բրիգադի կազմի մեջ մտցնել բանդյուղտեսչության սեկցիայից առաջադրվածներին (շրջաններում— շրջ ԲԳՏ-ի ներկայացուցչին) ընդհանուր ժողովներում, կանանց ժողովներում, շրջավորական խմբակների ժողովներում ընտրվածներին, (աղգային փոքրամասնություն ունեցող գյուղերից): Բրիգադն աշխա-

տում է ստուգատեսի հանձնաժողովի անդամի ղեկավարությամբ։

3. Բրիգադը քննում է ստուգատեսի հանձնաժողովից իրեն հանձնված կամ անմիջապես ստացված գանգատները, ցուցումները և առաջարկությունները, սակայն այդ մասին վոչ մի հատուկ վորոշում չի կայացնում, այլ այդ հարցերը հարուցում է համապատասխան կազմակերպությունների առաջ, բայց ըստ պարտականության բաժանում և ստացված գանգատները, ցուցումները և առաջարկությունները հետևյալ խմբերի, նրանց իրականացման և մատնանշված թերությունները վերացնելու հնարավորությունների համեմատ.—

ա) Ձեռնարկումներ, վոր հնարավոր է իրագործել, թերություններ, վոր կարելի յե վերացնել սեփական ուժերով. բրիգադն այս հարցերի առթիվ գյուղխորհրդի համապատասխան սեկցիայի հետ միասին միջոցներ է ձեռք առնում հարկ յեղած ձեռնարկումները շտապ կարգով իրագործելու համար, միաժամանակ լայնորեն տեղեկացնելով այդ մասին բնակչությանը և ստուգատեսի հանձնաժողովի միջոցով ոգնության հրավիրելով վերջինին, այդ ձեռնարկումներն իրականացնելու համար։

բ) Այն ցուցումները և առաջարկությունները, վորոնց իրականացման համար անհրաժեշտ է շրջանային կազմակերպությունների ոգնությունը կամ քննությունը, շտապ ուղարկվում են շրջանային բրիգադին, բայց ամեն մի նման ցուցումի և առաջարկության դրության մասին գյուղական բրիգադը պետք է պատասխան ստանա 10 որից վոչ ուշ.

գ) Հանրապետությունների կենտգործկոմներին վերաբերող հարցերը թե գյուղական և թե շրջանային բրիգադները. ուղարկում են հանրապետական հանձնաժողովին, վերջինները պարտավոր են ժամանակին հաղորդել գյուղական և շրջանային բրիգադներին այդ հարցերի վիճակի մասին։

4. Շրջանային բրիգադները գանգատները քննում են շրջ. Բ.Գ.Տ.-ի հետ միասին, իսկ ցուցումները՝ շրջգործկոմի կամ մյուս կազմակերպությունների համապատասխան բաժինների հետ։ Բրիգադներն առանձնացնում են լավագույն և տնտեսական եֆեկտ տվող առաջարկությունները՝ պարզեվատրության համար, ձեռք բերելով այդ շրջհանձնաժողովների և շրջգործկոմների միջոցով։ Ամենաղնահատելի առաջարկությունները ստուգատեսի հանրապետական հանձնաժողովի միջոցով ներկայացվում են համաանդրկովկասյան պարգեվատրման համար։

5. Գյուղական և շրջանային բրիգադները 10 որը մեկ անդամ հաշիվ են տալիս իրենց աշխատանքների մասին ստուգատեսի հանձնաժողովի պլենումին, բացի դրանից, յուրաքանչյուր ամսի 5-ին առաջարկություններ և ցուցումներ ըստ նրանց թվի, բայց մի անդամից վոչ պակաս 10 որյակում՝ ամսի 1-ին, 11-ին և 21-ին տեղեկագրերը ներկայացվում են գյուղական բրիգադների կողմից շրջանայինին, իսկ շրջանայինների կողմից հանրապետական հանձնաժողովներին։

Գյուղական հանձնաժողովների համար կազմվող տեղեկագրերը պետք է պարունակեն հետևյալ նյութերը.—

ա) Ի՞նչն է ցուցմունքի կամ առաջարկի եությունը.

բ) Ո՞ւմից է ստացվել.

գ) Ի՞նչի պետք է ձեռնարկել.

դ) Արդյունքը.

Նույն կետերը պետք է պարունակեն շրջանային հանձնաժողովի տեղեկագրերը, բացի «բ» կետից, վորի մեջ պետք է հիշատակել, թե վոր գյուղից է ստացվել առաջարկությունը։

Հանրապետական հանձնաժողովները ղեկուցում են Անդրկովկասյան հանձնաժողովին լոկ թվական տեղեկություններով, այսինքն՝ հայտնում են, թե վորքան առաջարկություններ են ստացվել, ուր են ուղարկվել և վորքան, քանիսն են ունեցել վերջնական արդյունք, իսկ գյուղացիների ամենաղնահատելի առաջարկությունները գյուղի խորհրդային և տնտեսական ապարատները, բարելավելու, այլ և իրենց շրջանում հայտնաբերված հանքերի և ոգտակար նյութերի վերաբերյալ տեղեկություններն ուղարկում են Անդրկովկասյան հանձնաժողովին։

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ

1. Ցե՞ր է սկսված ստուգատեսի կամպանիան։

2. Կազմակերպվա՞ծ են շրջգործկոմին և գյուղխորհուրդներին կից ստուգատեսի և պարգեվատրման հանձնաժողովներ և յե՞ր։

3. Ի՞նչպիսի խորհրդակցություններ և ժողովներ են գումարված ստուգատեսի համար (շրջակտիվի, կոլտնտեսականների, չքավոր և միջակ գյուղացիության, թղթակիցների, կանանց և այլն). նրանց քանակը և մասնակցողների թիվը, թվել մանրամասն յուր ժողովների տեսակի (կոլտնտեսականների, կանանց, չքավորների, միջակների և այլն):

4. Ի՞նչպիսի բրիգադներ են կազմակերպված գյուղում և շրջանում ստուգատեսի համար, նրանց վաղորոք խորհրդակցության հրավիրել են թե վոչ, աշխատանքի ծրագիր ունեցել են, և ով է մշակել ու հաստատել:

5. Շրջանային և գյուղական կազմակերպությունների մասնակցությունը ստուգատեսի կամպանիային ինչով է արտահայտվում:

6. Բրիգադների կատարած հետազոտությունների նյութերը և արած առաջադրությունները քննվե՞լ են խորհուրդների ընդլայնած պլենումներում, և ինչ վորոշումներ են ընդունված այդ ուղղությամբ:

7. Ինչպե՞ս է ընթանում սոցմրցումը և հարվածայնությունը ստուգատեսի կամպանիայի ընթացքում, քանի՞ բրիգադներ, հանձնաժողովներ, սեկցիաներ և խորհրդի առանձին անդամներ սոցմրցման են մասնակցում, ստուգված են այդ պայմանագրերը, վորչափով են կատարված նրանք:

8. Ստուգատեսի շուրջը լայն հասարակայնություն համախմբելու և կամպանիայի նպատակը պարզաբանելու նպատակով ինչպի՞սի աշխատանքներ են կատարված:

9. Կամպանիայի ընթացքում լույս տեսե՞լ են պատի թերթեր, և տեղական մամուլում վորքա՞ն է պարզաբանված ստուգատեսի վերաբերյալ հարցերը, և վորքան հարցեր են լուսաբանված նրանց էջերում:

10. Գյուղական և շրջանային հանձնաժողովներն ունեցե՞լ են աշխատանքի ծրագիր, թե վոչ. քանի՞ անգամ հանձնաժողովների նիստեր են գումարված, գյուղական հանձնաժողովների զեկուցումները լսվե՞լ են, թե վոչ, քանի անգամ և ինչ առաջադրություններ են արված:

11. Ստուգատեսի ընթացքում խորհուրդների աշխատանքների մեջ ինչպի՞սի թերություններ են հայտնաբերվել, և այդ ուղղությամբ ձեռք առնված գործնական միջոցները:

12. Քա՞նի գյուղխորհուրդ է ցրված, կամ առանձին անդամներ են հետ կանչված:

13. Ստուգատեսից հետո հրավիրվա՞ծ են կոնֆերենցիաներ և ընդլայնած պլենումներ, ո՞ւմ մասնակցությամբ և ստուգատեսի նյութերը մշակելու ուղղությամբ պլենումների և կոնֆերենցիաների աշխատանքներին ինչով են արտահայտվել:

ՀՍԽՀ
ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄ

№ 623

24 սեպտ. 1931 թ.

Երևան

բոլոր շրջգործկոմներին յեվ
Լենինականի Քաղխորհրդին

Ուղարկելով սրան կից ստուգատեսի հանձնաժողովների, բրիգադների կազմի և ստուգատեսի ժողովների մասին Անդրկենտգործկոմից ստացված հաշվառման ձևերը, խնդրվում է անհապաղ բազմացնել տալ շրջանիդ կարիքի չափով:

Գյուղխորհուրդները ստուգատեսի հաշվառումը կատարելու յեն գյուղվիճիլիազորների աջակցությամբ և նկատի ունենալով վոր՝

ա) սյունյակ 1-ից մինչև 20-ը լրացվում է ստուգատեսի հանձնաժողովի և բրիգադի կազմի տվյալներով, իսկ սյունյակ 21-ից մինչև 24-ը՝ ստուգատեսի ժողովների տվյալներով.

բ) Սոցիալական դրության բոլոր սյունյակների տվյալների գումարը պետք է հավասար լինի սյունյակ 4-ի («անդամների թիվը ընդամենը») տվյալին, ուստի անհրաժեշտ է բատրակների տվյալը անցկացնել միայն սյունյակ 13-ում:

Գյուղխորհուրդները սույն ձևը լրացնում են 2 օրինակ, վորից մեկը պահվում է գործում, իսկ մյուսը ուղարկվում է Շրջգործկոմին:

Շրջգործկոմն ել ստանալով շրջանի բոլոր տեղեկությունները ամփոփում է 2 օրինակ, վորից մեկը պարտադիր կերպով ուղարկում է Հայկենտգործկոմին վոչ ուշ ստուգատեսը վերջանալուց մեկ շաբաթ հետո՝ գրավոր զեկուցման հետ միասին:

Հայկենտգործկոմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար և կազմբաժնի վարիչ՝
Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Ավագ վիճակագիր՝
Հ. ԶՐԲԱՇՅԱՆ

30

Գյուղխորհրդի և շրջգործկոմի վիճակագրական բաժնի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստուգատեսի հանձնաժողովի, բրիգադի կազմի և ստուգատեսի ժողովների մասին

| № № քաղաքացիների | Ստուգատեսի հանձնաժողովի անդամների | Ստուգատեսի հանձնաժողովի բրիգադի անդամների | Ստուգատեսի հանձնաժողովի ժողովների | Սոցիալական դրություն | | |

193/p. - 561

11

31316